ՆՐԱ ՏԱՐԵՐՔԸ ԳՐՈՒՇՆ ԷՐ

1991թ. հուլիսի 19-ին Արցախի Շահումյանի հայաբնակ Վերիշեն և էրքեջ գյուղերի համար բռնկած կատաղի գոտեմարտում խորհրդային բանակի զրահատեխնիկայի շարասյան ու ազերիների դեմ խիզախորեն ու անձնանց մարտնչելիս հերոսաբար զոհվեց հայոց նորօրյա կամավորական, «Հատուկ գնդի» առաջին վաշտի հրամանատար, կապիտան ՋԻՎԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ՝ իր անձնվեր զինվորներ Վարդանի և Կոլյայի հետ, փրկելով մարտական ընկերներից շատերի կյանքը...

1990թ. գարնանը հաճախ էինք լսում Ջիվան Աբրահամյանի ու նրա կազմակերպած կամավորական ջոկատի մասին, սակայն նրան գտնելը կամ հանդիպելն այնքան էլ հեշտ չէր: Ջիվանը նկարահանվող «ֆիդայիներից» չէր, այսինքն՝ ոչ թե երևանում, օպերայի բակում էր, այլ սարերում ու ձորերում էր, զբաղված էր կամավորականների մարտական ուսուցմամբ և վտանգված հայկական գյուղերի պաշտպանությամբ: Խորհրդային բանակի պահեստի կապիտան Ջիվան Աբրահամյանը, որը հերոսական մարտական ուղի էր անցել 1990-ի գարնանից սկսած, Արցախ կոմիտեի և հրամանատարության հանձնարարությամբ իր վաշտով մշտապես այն վտանգված հայկական բնակավայրերում էր, ուր անհրաժեշտ էր շեշտակի ու հանկարծակի հարված հասցնել ազերիներին:

1991թ. մայիսի 1-ից մինչև 7-ը Տավուշի, Իջևանի և Նոյեմբերյանի սահմանամերձ գոտում տեղի ունեցած մարտական գործողություններից բերում ենք կոնկրետ փաստեր, որոնք վառ ապացույցն են Ջիվան Աբրահամյանի հերոսական գործելակերպի: Մայիսի 1-ի լույս 2-ի գիշերը Գետաշենի համար պատասխան վրեժխնդրության գործողություն կատարեցինք, Տավուշի թևից հրետակոծեցինք հակառակորդի Ճովուզի, Ղազախի և Գեղաբեկի շրջանները զգալի վնաս պատճառելով ազերիների բնակավայրերին ու մեծ խուճապ առաջացնելով նրանց օմոնականների ու զինյալների մեջ:

Դրա պատասխանը եղավ այն, որ մայիսի 3-ին խորհրդային բանակի հատկապես զրահատանկային զորամասերը Ադրբեջանի կողմից մեր դեմ մեծ պատնեշ կազմեցին: Անգեն աչքով նրանց կուտակումները մենք տեսնում էինք Տավուշի մարզի Պառավաքարի մեր դիրքերից դիմացի ադրբեջանական Ղշլաղ գյուղի շրջակա բարձունքներում: Այդ ծանր պահին իրենց անհողդողդ ու հոգով ուժեղ պահեցին մեր հրամանատար Ջիվան Աբրահամյանը, հրետանու պետ, 62-ամյա փոխգնդապետ Ղնեպրիկ Բաղդասարյանը, օպերատիվ իրավիճակի, զորքի սպառազինության և մյուս կարևոր հարցերի պատասխանատու, Ջիվանի մեծ եղբայր Պետրոս Աբրահամյանը և Ջիվանի մյուս զինակիցները: Մայիսի 3-ի լույս 4-ի գիշերը, ժամը 1:30-ից 2-ի սահմաններում, անսպասելիորեն «մարտական տագնապ» հայտարարվեց: Ոտքեներ անց մենք Տավուշի շրջկենտրոնի հյուրանոցից հասանք մոտակա ճաշարան, ուր մեզ տավուշցիները կերակրեցին մարտից առաջ, նույնիսկ հայկական տնական տոլմա և հոնի օղի հյուրասիրեցին: Ի դեպ, տեղական ջոկատների ընդհանուր հրամանատար, այն ժամանակվա Տավուշի շրջգործկոմի նախագահ Վ. Մելիքյանն էր հոգում մարտական օգնության ժամանած մեր ջոկատների ծախսերը: Ճաշելուց անմիջապես հետո լսվեց Ջիվանի հրահանգը.

-Պատրաստվել մարտի և շարժվել՝ համաձայն նախապես կազմված օպերատիվ պլանի:

Հետո Ջիվանը և գետաշենցի Կարենը, առաջինը վերցնելով իրենց դաշտային գնդացիրները, տեղավորվեցին «Վիլիս» մեքենայի մեջ, ու վաշտի անձնակազմից համապատասխան 20 արծիվներ գիշերային խավարում շարժվեցին Ջիվանի հետ միասին: Փոխգնդապետ Ղ. Բաղդասարյանի հետ ութ ազատամարտիկներ գիշերվա խավարում մեր միակ հրանոթը Պառավաքարի խաղողի այգիների և ճահճոտ մացառուտների միջով մի կերպ հրելով, հասցրինք նշանակված կետ, որտեղից 4-5 կմ հեռավորության վրա էին գտնվում հակառակորդի Ղշլաղ գյուղն ու կուտակումները: Այդ ծանր պահին «խոսեցին իմ օպերատիվ հետախուզական գիտելիքները», և դիմեցի փոխգնդապետ Բաղդասարյանին. ***«Երեկոյան մեծաթիվ ԲՄՊ մարտական մեքենաներ, տրանսպորտյորներ և զորքեր կուտակվեցին Ղշլաղ գյուղում ու նրա շրջակայքում: Դուք ի՞նչ հաշվարկով եք փորձում միակ հրանոթից կրակ բացել՝ սպառազինությամբ ու քանակով մեզ երկի տասնապատիկ գերազանցող հակառակորդի վրա, այն էլ այսպիսի բաց կրակագծից...»:*** Հրետանային փոխգնդապետը մասնագիտական պատասխանի համար ոչ տրամադրություն ուներ, ոչ էլ ժամանակ, ուստի զայրացած պատասխանեց. ***«Այստեղից էլ հենց խփելու եմ հակառակորդին, ով վախենում է, թող հեռանա»:*** Սակայն համոզվելով, որ մեր շարքում վախկոտներ չկան, կարգադրեց. ***«Բոլորդ անցեք ձեզ հանձնարարված մարտական առաջադրանքի կատարմանը»՝*** իրեն որպես օգնական պահելով միայն ՀԱԲ-ի Սուրոյին, որը ենթասպայի ուսադիրները փոխարինել էր «մայորի» ուսադիրներով և որպես խորհրդային բանակի «բարձրաստիճան» սպա էր դիմակայում հակառակորդ «յուրայիններին»: Այս օպերացիայի սկզբից ևեթ խորհրդավոր և հետաքրքրական էին մեր հրամանատար Ջիվան Աբրահամյանի բանիմաց ու խորամանկ գործողությունները, որոնք մեզ պետք է բերեին հաղթանակներ: Նախապատրաստվող մարտադաշտի աջ թևում դարանակալած դարաբաղցի Ջանոյի ու նրա վաշտի ինը մարտիկների հետ պետք է դիմահար կրակով ոչնչացնեինք ազերի օմոնականներին, եթե նրանք փորձեին այդ կողմից հարձակվել մեր հրետանային հաշվարկի վրա:

Առավոտյան ժամը 5.00-ի սահմաններում մեր հրանոթը կրակ բացեց Ղշլաղում ու նրա շրջակայքում տեղակայված հակառակորդի օբյեկտների վրա: Այդ ընթացքում, հակառակորդի համար անտանելի ու անհասկանալի պայմաններում, Ջիվանն իր վաշտի 20 քաջերով մագլցել էր բարձունքն ու հասել Ղշլաղի մատույցները, և այն պահից ճանաչեցինք նրանց համարձակ ու անկասելի գրոհը, երբ առջևից գնացող երկու զուգահեռ կետերից բոցի լեզուներ շաղտվեցին առաջ, և այդ լուսածիրային գնդակների լուսավորության տակ, վաղ առավոտյան կիսախավարում, հազիվ նշմարվում էին սև կետերի 4-5 փոքրիկ շղթաները: Առավոտյան ժամը 7.00-ի սահմաններում լուսացավ, և հակառակորդի, այսինքն՝ խորհրդային բանակի մարտական ուղղաթիռն ու մարտական մեքենաների (ԲՄՊ)-ի հրանոթները ոչնչացնող կրակ բացեցին մեր միակ հրանոթի վրա՝ շարքից հանելով այն, իսկ փոխգնդապետ Բաղդասարյանն ու ՀԱԲ-ի Սուրոն հրաշքով փրկվեցին թաքնվելով մոտակա թփուտներում: Խորհրդային բանակի զորքերի մարտական մեքենաները մոտ մեկ ժամ մեզ պահում էին գետնին գամված, այսինքն՝ հաստոցային, խոշոր տրամաչափի գնդացիրներից ու հրանոթներից կրակում էին ընկուզենիների ու կեռասենիների ամենաբարձր ծյուղերին, հասկացնելով, որ հետ գնանք: Այդ կրակային «դժոխքից» մեզ ազատեց Ջիվանի քաջությունն ու հնարամտությունը: Նա հակառակորդից աննկատ, իր խիզախների խմբով բարձրացել էր ամբարտակի պատվարին և սպառնում էր հակառակորդի հրամանատարությանը, որ կպայթեցնի այն, ու ջրհեղեղը կավերի ազերիների բնակավայրերը: Միայն դրանից հետո հակառակորդը դադարեցրեց կրակը, և մենք բարձրացանք Պառավաքարի մոտակա բարձունքները: Հասկանալի էր, որ Ջիվանը, լավ իմանալով խորհրդային բանակի «խոհանոցը», այնպես էր պլանավորել իր խիզախ գրոհը գիշերային պայմաններում, որ հակառակորդը ոչ միայն չէր կարողացել դիմադրել, այլև խուճապահար, կիսամերկ փախուստի էր դիմել զորանոցի լուսամուտներից՝ տալով էական զոհեր: Այդ մասին հետագա ամիսներին իրենց էջերում գրեցին «Վեչերնի Մոսկվա» և այլ կենտրոնական ռուսական թերթերը, իսկ դեպքերին մասնակից անդրկովկասյան ռազմական օկրուգի սպաներն ամենուրեք պետք է պատմեին այդ գիշերային օպերացիայի մասին, զարմանքով նկարագրելով, որ դրանք այլմոլորակայինների նման եկան աննկատ ու հեռացան անորսալի կոմանդոսների պես, իսկ պատճառած զոհերի քանակի մասին ամաչելով հրապարակել թիվը: Հիշատակված ռազմական գործողություններից հետո մեզ հրահանգ տրվեց որոշ ժամանակ զինվորական հագուստով չերևանք Երևան քաղաքում և այլ կենտրոնական վայրերում, մինչև որ մեր հրամանատարությունը որոշեր հետագա գործընթացը: Սակայն Ջիվանը չէր կարող սպասել, քանի որ վտանգի մեջ էին Արցախի գյուղերը, որոնք հայաթափվում էին և բռնազավթվում ազերի ոհմակների կողմից՝ ռազմական լայն աջակցություն ստանալով խորհրդային բանակի զորամասերից: Եվ ահա 1991թ. հուլիս 18-ին, իր վաշտի սահմանափակ քաջերով, Վազգեն Սարգսյանի հրահանգով Ջիվան Աբրահամյանը անհետաձգելի մարտական օգնության է հասնում Շահումյանին: Հուլիսի 19-ին, մարտի մասնակից ականատեսների պատմածի համաձայն, խորհրդային բանակի զրահատեխնիկայի շարասյունը՝ 35-40 միավոր մարտական մեքենաներ, ազերի օմոնական և զինյալ ջոկատների հետ միասին շարժվում են դեպի Վերիշեն ու էրքեջ գյուղերը, որոնց սպառնում էր արդեն Գետաշենի՝ ապրիլի 30-ի ճակատագիրը՝ հայաթափում: Ջիվանը, դիրքավորված Վերիշենի ճանապարհամերձ դպրոցի շենքում, իր երկու զինվորների հետ հակատանկային տեխնիկայով ոչնչացնում է հակառակորդի 2-3 միավոր առաջապահ մարտական մեքենաները, սակայն վրա հասնող շարասյան մեքենաներն անսպասելի գնդացրային կրակահերթի տակ են վերցնում Ջիվանին, Վարդանին ու Կոլյային, որոնք զոհվում են հերոսի մահով՝ իրենց դիրքերում:

ԲԱԲԿԵՆ ԲԱԲԱՅԱՆ
ՀԲ փոխգնդապետ,
արցախյան պատերազմի մասնակից